ԴԱՎԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

# ԹԱՆԳԱՐԱՆՆ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼ
(համառոտ պատմական ակնարկ)

Թանգարանը՝ որպես հաղորդակցական համակարգ, գիտականորեն ուսումնասիրվել է հատկապես 20-րդ դ. երկրորդ կեսից: Մասնագիտական գրականության մեջ թանգարանի ձևավորումը բաժանվում է երկու հիմնական փուլերի, որոնցից առաջինը կապված է հասարակական թանգարանային պահանջմունքների առաջացման, իսկ երկրորդը՝ թանգարանի՝ որպես հասարակական-մշակութային երևույթի, ծննդի (գենեզիս) պատմական շրջափուլերի հետ:[1]

Նշված առաջին պատմական փուլում էր, որ հանդես եկան թանգարանային գործունեության հիմնական ուղղությունների նախատիպերը (այդ թվում նաև հաղորդակցական): Վերջիններս հետագայում դարձան թանգարանի առանցքային գործառույթները, որոնցից հատկապես արդի թանգարանային հաղորդակցական-տեղեկատվական ոլորտը հեռանկարային է ողջ թանգարանային գործի ամբողջ ընթացքի զարգացման համար:

Ուստի, որոշեցինք սույն հոդվածի շրջանակում համառոտ անդրադառնալ նշյալ առաջին փուլին՝ համեմատականներ անցկացնելով նաև հայկական թանգարանների ձևավորման համապատասխան շրջանների հետ:

Հայտնի թանգարանագետ Զ. Ստրանսկին, քննելով թանգարանագիտության առարկայի խնդիրը, նշել է, որ ժամանակակից թանգարանը արտացոլում է իրականության հանդեպ մարդու վերաբերմունքի միայն մի ձևը՝ պատմականորեն ձևավորված, ընտրված առարկաների պահպանության և ցուցադրման միտումով: Ըստ նրա՝ թանգարանի կառուցվածքային հավերժ դրսևորում չկա. «այն ենթակա է փոփոխման, ու կարող է պատահել, որ գոյություն ունեցող տեսքով անհետանա»:[2] Հենց մարդու, հասարակության թանգարանային պահանջմունքներից բխող վերաբերմունքն էլ ենթադրում է թանգարանային հաղորդակցական գործընթացներ՝ տարբեր պատմական ժամանակաշրջաններում տարբեր պատմական իրադարձություններով բացատրված:

Դարեր շարունակ շփվելով շրջապատող նյութական աշխարհի հետ, մարդն աստիճանաբար առանձնացրեց, խմբավորեց որոշ իրեր: Վերջիններս,

[1] Տես՝ Российская Музейная Энциклопедия, - М., 2001, Т. 1, с. 395.
[2] Странский З. "Понимание музееведение"// Музееведение. Музеи мира: Сб. науч. тр. НИИ Культуры/- М.,1991, с. 18-19.

ըստ ժամանակի պատկերացումների, ունեին բարձր արժեք և ծառայում էին որոշակի հայացքների, զգացմունքային դաշտի փոխանցման, զանազան հետաքրքրությունների և այլ հոգևոր պահանջմունքների բավարարման: Ուստի, դեռ հնագույն ժամանակներից սկսեցին ձևավորվել հավաքածուներ, որոնք ծառայում էին որոշակի համոզմունքներով (հիմնականում կրոնական) մարդու և նրա դավանած արժեքային համակարգերի միջև հաղորդակցությանը: Թեև հաղորդակցության այդ ձևը դեռևս չենք կարող համարել թանգարանային, սակայն այն հետագայում մեծապես նպաստեց թանգարանային գործում հաղորդակցության հոգևոր պահանջմունքների առաջացմանը՝ որպես մարդու, մարդկային առանձին խմբի որոշակի վերաբերմունք ընտրված իրերի հանդեպ: Այսպես, «Աֆրիկայում և Օվկիանոսի կղզիներում հայտնաբերվել են նեղլիթյան դարաշրջանում պաշտմունքային իրերի հավաքածուներ»:[3] Եթե այսօր հնագետների հայտնաբերված նյութով, հնագիտության պարգած տվյալներով մենք հաղորդակցվում ենք Աֆրիկայի և Օվկիանոսի տվյալ մշակույթը կրող հանրության, նրա հոգևոր պահանջմունքների հետ, ապա նշված հավաքածուները Նեղլիթի դարաշրջանում ծառայել են մարդու և որոշ կրոնական արժեքային համակարգերի, նրա հայացքները կիսող ցեղակիցների հաղորդակցությանը: Նշված երկու դեպքում էլ նույն իրերի միջոցով, որոնք ընտրվել են տարբեր արժեքային համակարգերի հիման վրա, տեղի է ունենում հաղորդակցություն: Ուստի, մարդու հետագա զարգացման, նրա հոգևոր պահանջմունքների փոփոխության հետևանքով է, որ նեղլիթյան հաղորդակցական այդ ձևերը վերածեցին «թանգարանի»՝ որպես հասարակական-մշակութային հաստատության, սոցիալական գործառույթների արդյունավետ իրականացումը նախատեսող թանգարանային հաղորդակցական-տեղեկատվական գործունեության:

Մասնագիտական գրականության մեջ թանգարանի նախատիպային առաջին դրսևորումների շրջանը հիմնականում համարվում է Անտիկ հունա-հռոմեական դարաշրջանը: Այսպես. «Հայտնի է, որ աշխարհի թանգարանային տիպի առաջին հաստատությունները Հունաստանի և Հռոմի մուսսաների տաճարներն են եղել, որոնցից էլ թանգարանները ժառանգել են իրենց հունարեն «մուզեոն» և լատիներեն «մուզեում» անվանումները»:[4] Մուզեոնները (թարգմանաբար՝ «մուսսաներին նվիրված տարածք») արվեստի, գիտության հովանավոր դիցուհիներին՝ մուսսաներին նվիրված սրբավայրեր էին, որտեղ ժամանակի ընթացքում դիցաբանական պատկերացումներով, հավաքվում, նվիրաբերվում էին արվեստի ստեղծագործություններ և այլ հոգևոր ու

---

[3] Юренева Т. Ю. Музееведение: - М., 2003, с. 15

[4] Ղաֆադարյան Կ. Հայաստանի թանգարանների պատմությունից // Լրաբեր հասարակական գիտությունների: - Եր. 1972, հ. 10, էջ 20:

նյութական արժեքներ: Վերջիններս հետագայում ծառայում էին կրոնական հաղորդակցությանը՝ նպաստելով նաև հասարակության գեղագիտական հաստիարակությանը: Անտիկ հունական մշակույթի, գիտության, հասարակական-քաղաքական կյանքի, «մարդակենտրոն» դիցաբանական պատկերացումների զարգացման զուգահեռ՝ մուսասների տաճարները դարձան նաև Անտիկ գիտության, արվեստի զարգացման օջախներ: Օրինակ՝ Պլատոնի «Ակադեմիային», Արիստոտելի «Լիցեյին» կից գործող մուզեոններն իրենց արժեքներով ուղղակի ծառայում էին գիտական, կրթական նպատակներով հասարակական հաղորդակցության գործընթացներին: Բացի այդ, հաղորդակցական կարևոր դեր ունեին հասարակական վայրերում կառուցվող պինակոտեկները, ստոյաները, որոնք իրենց արժեքներով (քանդակներ, որմնանկարներ և այլն) հույներին պետք է հիշեցնեին իրենց անցյալի հերոսական դրվագներ ու փառքը:

Փաստորեն, Անտիկ Հունաստանում ստեղծված հավաքածուները, որոնք պատկանում էին հասարակությանը և մատչելի էին լայն զանգվածներին, ծառայում էին արժեքների միջոցով կրոնական-գաղափարաբանական և նրանից բխող գեղեցիկի, բարոյականի պատկերացումների փոխանցմանը: Թեև որոշ դեպքերում այդ հավաքածուները նաև ծառայում էին հենց ճանաչողական նպատակով հաղորդակցական գործընթացներին (օրինակ Արիստոտելի բնագիտական հավաքածուն, Աթենքի Ակրոպոլիսի պինակոտեկը և այլն):

«Նպատակաուղղված հավաքչական աշխատանքները սկզբնավորվեցին հելլենիստական դարաշրջանում»:[5] Այս շրջանում էր, որ հունական մշակույթի երևույթ համարվող «մուսեոնների» ստեղծումն ու զարգացումը հելլենիստական պետությունների համար դարձավ նպատակասլաց քաղաքականություն, ինչպիսին էր Ալեքսանդրիայի «Մուսեոնը»: Վերջինս, հունական մշակույթի արժեքների հավաքման ու զարգացման նպատակային և կանոնակարգված սկզբունքների շնորհիվ՝ դասվում է առաջին թանգարանատիպ կառույցների շարքում: Սակայն, Ալեքսանդրիայի «Մուսեոնը»՝ հարուստ գրադարանով ու այլ հավքածուներով, ինչպես նաև ժամանակի նմանատիպ կառույցները, հասարակական սրբավայրեր չէին: Դրանք Եգիպտոսի տիրակալ Պտղոմեոսների պալատներին կից բարձրաշխարհիկ, կիսակրոնական, գիտական-ստեղծագործական աշխատանքների անցկացման վայրեր էին և չէին նպաստում լայն հասարակության հաղորդակցությանը: Այդ «Մուզեոններն» առավել ծառայում էին գիտական հետազոտություններին, այսինքն՝ ժամանակի կրթված խավի համար ճանաչողական գիտելիքի ստացման նպատակով հաղորդակցմանը:

---

[5] Юренева Т. Ю. Музееведение:- М., 2003, с. 20

Հավաքչությունը լայն թափ ստացավ Հին Հռոմում՝ կապված հռոմեական նվաճումների ու հզոր կայսրության ստեղծման հետ, որտեղ հունական մուսսաների տաճարների դերը սկսեցին ստանձնել հռոմեական սրբավայրերը՝ ենթադրելով նրանց կրոնական հաղորդակցության հարացույց կիրառումը: Հռոմում ևս տարածվեց մասնավոր հավաքածուների ստեղծման գործընթացները: Վերջիններս պայմանավորված հունական մշակույթի հետ ժառանգական կապ պահպանելու, հաղորդակցվելու, սեփական սոցիալական բարձր դիրքը շեշտելու, ինչպես նաև գեղագիտական հաճույք ստանալու հռոմեական ազնվականների ձգտումների հետ: Ի տարբերություն բարձրաշխարհիկ խավի՝ հասարակական լայն շերտերը բարձրարժեք ստեղծագործությունների հետ հաղորդակցվում էին հռոմեական տաճարներում և այլ հասարակական վայրերում, որտեղ արդեն առկա էին պահվող նյութերի հավաքման, հաշվառման, պահպանության ցուցադրման որոշ եղանակներ:

Այսպիսով, Անտիկ հունահռոմեական մշակույթի մեջ ի հայտ եկան մի շարք հասարակական-հաղորդակցական ձևեր՝ հիմնված տարաբնույթ հանրային և մասնավոր հավաքածուների վրա: Թեև նմանատիպ գործընթացները դեռևս չենք կարող համարել թանգարանային հաղորդակցության նախնական ձևեր, սակայն հենց դրանք խթանեցին և վերահմաստավորվելով՝ Վերածնության դարաշրջանում դարձան թանգարանային հաղորդակցության հասարակական պահանջմունքի առաջացման հիմքը:

Միջնադարում ևս շարունակվեցին նախկինից եկող հավաքածուների ստեղծման և հաղորդակցական գործընթացները՝ խարսխված «երկու այն հիմնական մոտեցումների վրա, որ հավաքածուները ստեղծվում էին կամ դրանց տերերի այս կամ այն նախասիրությունները բավարարելու, կամ հասարակության հետ հաղորդակցվելու համար»:[6] Առաջին տիպի հավաքածուները կամ գանձատները պատկանում էին իշխող խավին՝ դառնալով նրանց սոցիալական բարձր դիրքի վավերագիրը: Երկրորդ մոտեցումն առավելապես վերաբերվում է միջնադարյան եկեղեցուն: Վերջինս «մասնակիորեն իրականացնում էր այն գործառույթները, որոնք հաջորդ դարաշրջաններում սկսեցին իրականացնել թանգարանները»:[7] Կարգավորելով կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ եկեղեցին գաղափարական-քարոզչական գործունեությունն իրականացնելիս սեփական գանձատուն-պահոցներով, կրոնածիսական նշանակության առարկաներով, ճարտարապետությամբ, ծեսերով ստեղծում էր մի յուրօրինակ կանոնիկ-խորհրդանշային, զգայահոգեբանական միջավայր, որը պետք է նպաստեր մարդ-Աստված հաղորդակցությանը:

---

[6] Шулепова Э. А. Основы музееведения:- М., 2005 с. 111.
[7] Юренева Т. Ю. Музееведение: - М., 2003, с. 60.

Այսօր թանգարանները սկզբունքորեն գրեթե նույն հաղորդակցական հարացույցն են կիրառում ցուցադրական, մշակութային-կրթական աշխատանքները կազմակերպելիս՝ արդի հասարակական-հաղորդակցական գործառույթներին համապատասխան:

Այսպիսով, միջնադարում կրոնական աշխարհայացքի ազդեցությամբ՝ հանրային և մասնավոր հավաքածուների ստեղծումը և դրանից բխող հաղորդակցական գործընթացները փոխարինեցին մարդ-Աստված հաղորդակցությամբ՝ որպես ժամանակի հասարակական հոգևոր պահանջմունք:

Թանգարանի՝ որպես հասարակական-մշակութային օջախի ձևավորումը սկսվեց Արևմտյան Եվրոպայում, Վերածնության շրջանում: Անտիկ հունահռոմեական մշակույթի հանդեպ առաջացած հետաքրքրությունների շրջանակում տարածվեց հումանիստական գաղափարախոսությունը, որն ի տարբերություն կամ ի հակադրություն միջնադարյան «Աստվածակենտրոն» փիլիսոփայությանը, խնդիր դրեց «ուսումնասիրել այն ամենը, ինչ կապված էր մարդկային խառնվածքի և նրա հոգևոր աշխարհի հետ»:[8] Այս պատկերացումներով, ինչպես նաև հումանիտար գիտությունների զարգացմամբ պայմանավորված՝ վերականգնվեց Անտիկ շրջանում լայն տարածում ստացած մասնավոր հավաքածուների ստեղծումը: Այն պայմանավորված էր պատմական տեղեկատվություն ստանալու, անցյալի փորձի հետ հաղորդակցվելու, գեղագիտական հաճույք ստանալու և ստեղծագործական միջավայր ստեղծելու, ինչպես նաև հասարակության մեջ վարկանիշը բարձրացնելու մտավորականության և ազնվականության ձգտումներով: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ նույնիսկ փորձեր արվեցին հասարակական թանգարանային կառույցներ հիմնել, որոնք դեռևս անհաջող վախճան ունեցան՝ կապված հասարակական-քաղաքական իրավիճակի, թույլ հաղորդակցական հնարավորությունների հետ (Կպիտոլյան Անտիկվարիումը Հռոմում՝ հիմնված Միքստոս IV պապի կողմից 1471թ., Դոմինիկ և Ջովանի Գիրմանի եղբայրների հավաքածուն՝ Վենետիկում 1523 թ. և այլն):[9] Վերածնության դարաշրջանում ստեղծված տարբեր հավաքածուները, տարբեր անվանումներ ունեին, օրինակ, Իտալիայում՝ Ստուդիոլո, Սուզեում, Անտիկվարիում, Գերմանիայում՝ կամերան, Ֆրանսիայում՝ Կաբինետ և այլն, սակայն բոլորն էլ կրում էին ունիվերսալ բնույթ, այսինքն՝ մեկ վայրում հավաքվում էին և՝ արվեստի գործեր, և՝ գրադարաններ, և՝ բնագիտական, հազվագյուտ իրեր՝ պայմանավորած հումանիստների «աշխարհը ճանաչելու», «աշխարհի մոդելը» գտնել-ներկայացնելու ձգտումով: Նման հավաքածուների հիման վրա հաղորդակցությունը հնարավոր

---

[8] Юренева Т. Ю. Музееведение: - М., 2003, с.69.

[9] Տես՝ Шулепова Э. А. Основы музееведения:- М., 2005 с. 112-113.

էր մտավորականների, ազնվականների համար, որոնք արդեն որոշակի գիտելիքների պաշար ունեին:

Ուստի, Վերածննության դարաշրջանում, թեև արդեն որոշարկված էին հասարակության թանգարանային պահանջմունքները՝ կրթական, ճանաչողական նպատակներով հավաքածուների հիման վրա հաղորդակցական գործընթացներ կիրառելու առումով, սակայն միայն հասարակության մի քանի շերտերի էին ծառայում:

Թանգարանի՝ որպես հասարակական-մշակութային օջախի խնդիրը դրվեց և հասարակական հնչեղություն ստացավ Եվրոպական Լուսավորչության ժամանակաշրջանում, որով թանգարանը սկսեց համարվել նաև որպես հասարակական-հաղորդակցական համակարգ՝ ժամանակի հանրային հոգևոր-մշակութային պահանջմունքներից ելնելով:

Այսպիսով, հասարակության թանգարանային պահանջմունքների ձևավորման գործընթացում թանգարանի նախատիպեր համարվող մի շարք հասարակական-հաղորդակցական կառույցների (մուսսաների տաճարներ, հեթանոսական սրբավայրեր, միջնադարյան եկեղեցիներ, վերածննդյան հումանիստական հավաքածուներ և այլն) համատեքստում դրվեցին այն հաղորդակցության նախնական ձևերը, որոնք հետագայում նպաստեցին թանգարանային գիտագործնական բնագավառի ձևավորմանը, թանգարանի՝ որպես հասարակական-մշակութային համակարգի առաջացմանն ու հետագա զարգացմանը:

Հիշյալ երկրներին զուգահեռ, ըստ պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի՝ «հին և հնագույն Հայաստանի մեհյանները, սկսած ուրարտացիների ժամանակներից, բայց նրանից էլ առաջ, եղել են արվեստի, դպրության, ճարտարության կենտրոններ»:[10] Հետևաբար մուսսաների տաճարների նմանությամբ այստեղ էլ եղել են հավաքածուներ, որոնք ծառայել են մարդու և նրա դիցաբանական պատկերացումների հաղորդակցությանը՝ միաժամանակ փոխանցելով գեղեցիկի, բարոյականի արժեքային համակարգեր: Բացի այդ, հատկապես հելլենիստական շրջանի հայկական արքունիքներում և իշխանական դղյակներում, ուր գրվում էին պատմություններ, անցկացվում թատերական ներկայացումներ, պետք է որ գոյություն ունենային բարձրարժեք ստեղծագործությունների հավաքածուներ, որոնց հատուկենտ նմուշներն այսօր հայտնաբերվում են հնագիտական պեղումների ընթացքում: Ուստի, արդեն ուրարտական ժամանակաշրջանից սկսած Հայաստանի տարածքում դրված էին այն նախնական հաղորդակցական գործընթացները, որոնք հատուկ էին Անտիկ մուսսաների տաճարներին: Իսկ Ալեքսանդրիայի Մուսեյոնին բնորոշ նախաթանգարանային

---

[10] Ղաֆադարյան Կ. Հայաստանի թանգարանների պատմությունից//- Լրաբեր հասարակական գիտությունների: - եր. 1972, հ. 10, էջ 22:

գործընթացները, ամենայն հավանականությամբ, առկա պիտի լինեին նաև հայոց Հելլենիստական արքունիքում ստեղծվող հավաքածուներում:

Քրիստոնեության մուտքով այս հավաքածուները հիմնականում ոչնչացվեցին և դրվեցին նոր կրոնական աշխարհայացքին համապատասխան նոր տիպի նախաթանգարանային հավաքածուների ստեղծման սկզբունքներ, դրանցից բխող նոր հաղորդակցական գործընթացների սկիզբը: Վերջիններս հիմնականում կապված էին եկեղեցիներին կից ստեղծվող ավանդատուն-գանձատների, գրադարան-մատենադարանների հավաքածուների հետ, որոնք արդեն անվանվում էին «թանգարաններ»: Սա հիմք է տվել Ղաֆադարյանին, հենվելով Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունների վրա, նշել, որ «Միջնադարյան Հայաստանն արդեն ունեցել է իր իսկական թանգարանները, որոնք երեք տարբեր կարգերի են բաժանվել՝ արքունի, իշխանական տների և եկեղեցական թանգարաններ»:[11] Սակայն, կարծում ենք, որ այսօրվա պատկերացմամբ նմանատիպ «թանգարանները», որոնք պարունակել են ինչպես եկեղեցական-ծիսական առարկաներ, ձեռագրերի հավաքածուներ, այնպես էլ նյութական արժեքներ, իրենց գործառույթային դրսևորմամբ (այդ թվում հաղորդակցական), դեռևս «իսկական թանգարաններ» չի կարելի համարել: Վերջիններս ավելի շատ նպաստում էին հոգևոր արժեքների փոխանցմանը, մարդ-Աստված հաղորդակցությանը՝ ստեղծվող հատուկ եկեղեցական-կանոնիկ միջավայրի, արարողությունների, ինչպես նաև մատենադարանների, հոգևոր կրթական օջախների գործունեության միջոցով: Իսկ արքունի և իշխանական հավաքածուներ գերազանցապես առաջանում էին սոցիալական բարձր դիրքի ընդգծման, իրենց շքեղությամբ շրջապատելու ազնվականության ճգտումներով պայմանավորված, ինչպես նաև դրանք գանձատան դեր էին կատարում:

Այսպիսով, թեև հայկական թանգարանների առաջացումը հիմնականում պայմանավորված էր 19-րդ դ. երկրորդ կեսից մտավորականության՝ մշակույթը պահպանելու, ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու ձգտումներով, սակայն Հայաստանի տարածքում դեռ հնագույն ժամանակներից արդեն առկա էին նախաթանգարանային հավաքածուները: Ուստի, Վերջիններիս հիման վրա իրականացվող հաղորդակցական գործընթացները նույնպես գոյություն ունեին, որոնք համեմատելի են եվրոպական նմանատիպ հավաքածուների հիմքով կարգավորվող հաղորդակցական ձևերին:

---

[11] Նույն տեղում, էջ 22: